

Հետախուզական ծառայություններ

Անվտանգության ոլորտի լավ կառավարման գործընթացում դերերը և պարտականությունները

Տեղեկագրերի շարքի մասին

Անվտանգության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ տեղեկագրերում (անգլ.՝ «SSR Backgrounders») համառոտ ներածական տեղեկություններ են ներկայացվում անվտանգության ոլորտի լավ կառավարման («ԱՌ լավ կառավարում», «ԱՌԼԿ») և անվտանգության ոլորտի բարեփոխումների («ԱՌՔ») թեմաների և հասկացությունների վերաբերյալ: Տեղեկագրերի շարքում, միջազգային փորձի լայն շրջանակի հիման, վրա ամփոփվում են ընթացիկ քննարկումները, տրվում հիմնական հասկացությունների բացատրությունները, վերլուծվում առանցքային հակասությունները: Անվտանգության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ տեղեկագրերում չեն խրախուսվում լավ կառավարման կամ բարեփոխումների կոնկրետ մոդելներ, քաղաքականություններ կամ առաջարկություններ, փոխարենը՝ առաջարկվում են լրացուցիչ աղբյուրներ, որոնք ընթերցողներին թույլ կտան ընդլայնել իրենց գիտելիքները թեմաներից յուրաքանչյուրի վերաբերյալ: Անվտանգության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ տեղեկագրերը տեղեկատվության օժանդակ աղբյուր են հանդիսանում անվտանգության ոլորտի կառավարման և բարեփոխումների շահագրգիռ կողմերի համար, ովքեր ձգտում են հասկանալ, սակայն միևնույն ժամանակ քննադատաբար գնահատել ԱՌ լավ կառավարման և ԱՌՔ-ի ներկայիս մոտեցումները:

ԱՌՔ այս տեղեկագրի մասին

ԱՌՔ այս տեղեկագրում ներկայացվում են հետախուզական ծառայությունների դերերը և պարտականություններն անվտանգության ոլորտի լավ կառավարման (ԱՌԼԿ) գործընթացում: Հետախուզական ծառայություններն անվտանգության կարևորագույն գործառնություն են կատարում կառավարություններին ժամանակին տրամադրելով պետությունների և հասարակությունների անվտանգությունը պաշտպանելու համար անհրաժեշտ տեղեկատվություն: Հետախուզական ծառայություններն իրենց նկատմամբ ԱՌ լավ կառավարման սկզբունքների կիրառման արդյունքում արդյունավետ և հաշվետու են դառնում ժողովրդավարական կառավարման, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի շրջանակներում:

ԱՌՔ այս տեղեկագրից տալիս է հետևյալ հարցերի պատասխանները.

- Ի՞նչ են հետախուզական ծառայությունները [Էջ 2](#)
- Ի՞նչով են զբաղվում հետախուզական ծառայությունները [Էջ 2](#)
- Ինչպե՞ս է մշակվում հետախուզական տեղեկատվությունը [Էջ 4](#)
- Միջամտելու ի՞նչ իրավական լիազորություններ ունեն հետախուզական ծառայությունները [Էջ 5](#)
- Ինչպե՞ս կարող են հետախուզական ծառայությունները հետևել անվտանգության ոլորտի լավ կառավարման պահանջներին [Էջ 7](#)
- Ինչպե՞ս են անվտանգության ոլորտի բարեփոխումները նպաստում հետախուզական ծառայություններին [Էջ 8](#)
- Ինչպե՞ս է կարելի գաղտնիությունը դարձնել համադրելի լավ կառավարման հետ [Էջ 9](#)
- Ի՞նչ է միջազգային համագործակցությունն հետախուզական բնագավառում [Էջ 9](#)
- Լրացուցիչ աղբյուրներ [Էջ 11](#)

Ի՞նչ են հետախուզական ծառայությունները

Հետախուզական ծառայությունները մասնագիտացված պետական մարմիններ են, որոնք զբաղվում են պետության և բնակչության անվտանգությանն առնչվող հետախուզական տեղեկատվության մշակմամբ: Պետությունները սովորաբար ունենում են մեկ կամ մի քանի հատուկ ծառայություններ, որոնք մասնագիտանում են ըստ աշխարհագրական, թեմատիկ կամ տեխնիկական հետախուզական գործողությունների:

Հետախուզական ծառայությունները կարող են աշխատել բացառապես մեկ ուղղությամբ, օրինակ՝ ներպետական, արտաքին, ռազմական, քրեական կամ ֆինանսական հետախուզություն, կամ՝ մեկ ծառայություն կարող է լիազորված լինել աշխատելով մի քանի տարբեր ոլորտներում, օրինակ՝ մշտադիտարկել ինչպես ներպետական, այնպես էլ արտաքին անվտանգությունը: Պետությունները կարող են պետական տարբեր ծառայությունների հետախուզական գործառնությունների միավորմամբ ստեղծել հետախուզական համատեղ մասնագիտացված ստորաբաժանումներ, որոնք կզբաղվեն կոնկրետ թեմատիկ ոլորտներով, ինչպիսիք են ահաբեկչությունը կամ ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարը: Զաղաքացիական, ռազմական և իրավապահ կառույցների հետախուզական այս ծառայությունների ամբողջությունը՝ անվտանգության այլ կառույցների կազմում գտնվող բոլոր այլ ստորաբաժանումների հետ միասին, կազմում է «անվտանգության հանրույթը» (Գծապատկեր 1):

Հետախուզական մի քանի ծառայություններ ունենալու հանգամանքը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր գերատեսչության ներսում ունենալ ավելի խոր մասնագիտացում և տրամադրել սպառնալիքների վերաբերյալ տարաբնույթ վերլուծություններ: Այդուհանդերձ, սա կարող է նաև խորացնել համակարգման հետ կապված խնդիրները կամ միջգերատեսչական մրցակցությունը, ինչը կարող է հանգեցնել սպառնալիքների ոչ լիարժեք գնահատման: Միայն մեկ հետախուզական ծառայություն ունենալը կարող է արդյունավետ լինել ծախսերի տեսանկյունից և նվազեցնել համակարգման խնդիրները, սակայն, միևնույն ժամանակ, առաջացնել մեկ կառույցի ներսում չափից ավելի լիազորություններ կենտրոնացնելու ռիսկեր: Անկախ պետության կողմից ընտրվող տարբերակից՝ անհրաժեշտ է ժողովրդավարական վերահսկողության լավ տեղայնացված համակարգ, որպեսզի հետախուզական ծառայությունները գործեն իրենց լիազորությունների, օրենքի և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի շրջանակներում (տե՛ս «Հետախուզական գործունեության նկատմամբ վերահսկողություն») խորագրով ԱՌՔ տեղեկագիրը):

Ի՞նչով են զբաղվում հետախուզական ծառայությունները

Հետախուզական բոլոր ծառայությունների հիմնական գործառնությունը պետության և բնակչության նկատմամբ հնարավոր սպառնալիքների վերաբերյալ հավաստի տեղեկատվության տրամադրումն է կառավարություններին: Հետախուզական ծառայություններն ուսումնասիրում են համալիր հիմնախնդիրները և ուշադրություն հրավիրում նորահայտ պրոբլեմների, ազգային շահերի սպառնալիքների, ռիսկերի և հնարավորությունների վրա:


Նրանց վերլուծություններն օգնում են քաղաքական որոշում կայացնողներին.

- Սահմանելու ազգային շահերը,
- Մշակելու ազգային անվտանգության և ռազմական համաձայնեցված ռազմավարություններ և անվտանգության համարժեք քաղաքականություն,
- Որոշելու զինված ուժերի և անվտանգության այլ կառույցների առաքելությունը, դոկտրինը և ռազմավարությունները,
- Նախապատրաստվել և արձագանքել ազգային ճգնաժամերին,
- Նախապատրաստվել պետության և բնակչության համար առկա սպառնալիքներին և կանխել դրանք:

Հակահետախուզությունը կանխում է օտարերկրյա ծառայությունների կամ օտարերկրյա հսկողության տակ գտնվող քաղաքական խմբերի կողմից լուտտությունը, դիվերսիան կամ սաբոտաժը՝ պաշտպանելով հետախուզության աղբյուրները և մեթոդները՝ երկրում և երկրից դուրս: **Հակահետախուզության պաշտպանական միջոցառումները** հիմնվում են հարցումների, վեթիկզի և դիտարկման վրա: Հակահետախուզության հարձակողական միջոցառումները ներառում են այլ կազմակերպություններ ներթափանցելու, խաբելու, խաթարելու և մանիպուլյացնելու գործառնությունները:

Քողարկված գործողությունը, որին անվանում են նաև **հատուկ քաղաքական գործողություններ** կամ **ակտիվ միջոցառումներ**, գաղտնի գործողությունների հատուկ տեսակ է, որի նպատակն է ազդել այլ պետության ներքին քաղաքական, ռազմական կամ տնտեսական վիճակի վրա: Քողարկված գործողությունների տեսակները տարածվում են պրոպագանդայից և արտերկրում քաղաքական գործունեությունից մինչև աջակցություն օտարերկրյա կառավարություններին կամ այլ պետության տարածքում իրականացվող անօրինական գործողությունների խափանում: Քողարկված գործողությունները պետությունների համար անմիջական ռազմական գործողությունների այլընտրանք են հանդիսանում այն դեպքերում, երբ դիվանագիտական և այլ քաղաքական ջանքերը ձախողվում են: Հետախուզական բազմաթիվ մարմիններ ունեցող պետություններում քողարկված գործողություններով սովորաբար զբաղվում են միայն արտաքին հետախուզության ծառայությունները:

Գծապատկեր 1. Պետական կառույցների հետախուզական գործառնությունները



Ինչպե՞ս է մշակվում հետախուզական տեղեկատվությունը


Հետախուզական տեղեկատվությունը մշակվում է որոշակի գործընթացով, որը հայտնի է «**Հետախուզության փուլաշրջան**» անվանմամբ (Գծապատկեր 2):

- **Պլանավորումը և ուղղորդումը** սահմանում են պետական քաղաքականության շրջանակներում հետախուզական ծառայության նպատակները և սպառնալիքների գնահատման հիման հատկացնում ռեսուրսներ:
- **Տեղեկատվության հավաքագրման** փուլում բաց և գաղտնի աղբյուրներից հավաքվում է տեղեկատվություն անձերի, վայրերի, իրադարձությունների և գործողությունների վերաբերյալ:
- **Վերամշակման փուլում** հավաքագրված տեղեկատվությունը տեսակավորվում է, ստուգվում են դրա աղբյուրները և նպատակը, և ընդհանուր իրավիճակին վերաբերող տեղեկություններ են հավելվում՝ վերլուծություն պատրաստելու նպատակով:
- **Պատրաստման և վերլուծության փուլում** տեղեկատվությունը վերածվում է հետախուզական փաստաթղթի, որը որոշում կայացնողներին տրամադրում է

պատեհ ժամանակին ճշգրիտ, անաչառ և իրատեսական գնահատականներ: Վերլուծությունը պետք է ներառի փաստեր, աղբյուրներ, առանցքային ենթադրություններ, այլընտրանքային սցենարներ և պոտենցիալ ազդեցիկ, սակայն անհայտ գործոններ:

- **Տարածման** միջոցով հետախուզական տեղեկատվությունը, այդ թվում՝ նախագգուշացման և օպերատիվ ամփոփագրեր, գնահատականներ, հաշվարկներ և զեկույցներ, փոխանցվում է որոշում կայացնողներին: Հետախուզական տարատեսակ տեղեկատվություն ստանալու իրավունք ունեցողների շրջանակի սահմանումը որոշում կայացնելու վճռական փուլ է հետախուզական փուլաշրջանում և հետախուզության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն իրականացնելու տեսանկյունից:
- **Օգտագործումը և հետադարձ կապը** տեղի է ունենում, երբ որոշում կայացնողներն օգտագործում են հետախուզական տեղեկատվությունը որոշումներ կայացնելու նպատակով: Հետախուզական հանրույթի հետ հետադարձ կապը՝ տրվող արձագանքը, ներառում է ցուցումներ հետախուզական հետագա կարիքների վերաբերյալ, որոնք հաշվի են առնվում պլանավորման և ուղղորդման փուլում՝ այդ կերպ վերստին մեկնարկելով փուլաշրջանը:

Գծապատկեր 2 Հետախուզության փուլաշրջան



Միջամտելու ի՞նչ իրավական լիազորություններ ունեն հետախուզական ծառայությունները

Հետախուզական ծառայություններն օժտված են հատուկ իրավասություններով և կարողություններով՝ իրենց վերապահված լիազորություններն իրականացնելու համար: Այդ իրավասությունները կախված են ազգային ենթատեքստից և հետախուզական ծառայությունների գործառնություններից և չպետք է խախտեն միջազգային իրավունքի և մարդու իրավունքների նորմերը: Այդուհանդերձ, հետախուզական ծառայություններին օրենքով թույլատրվում է որոշ ոլորտներում սահմանափակել մարդու և քաղաքացու իրավունքները:

- Դրանք կարող են ներառել, մասնավորապես.
 - Հետախուզական տեղեկատվության հավաքման մեթոդներ, որոնք կարող են խախտել **մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը**, օրինակ՝ հաղորդակցության միջոցների վերահսկումը և գաղտնալսումն ու բովանդակության ամրագրումը
 - **Անձնական տվյալների օգտագործումը և փոխանցումը** պետական տարբեր գերատեսչությունների, օրինակ՝ իրավապահ մարմինների միջև,
 - Որոշ պետություններում՝ իրավապահ գործունեության և ձեռքբերելու ու կալանավորելու իրավասություններ՝ **սահմանափակելով ազատ տեղաշարժի իրավունքը**,
 - **Քողարկված գործողություններ**, որոնք ուղղված են պայքարելու ազգային անվտանգության սպառնալիքների դեմ, երբեմն՝ օրենքի գործողությունը դադարեցնելով:

Ընդարձակ և միջամտելու հավանականություն պարունակող այդ լիազորությունները կարող են նաև ուղղված լինել պետության սեփական բնակչության դեմ: Այսպիսով, **հետախուզական ծառայությունների նկատմամբ անհրաժեշտ է խիստ վերահսկողություն՝ իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը, ներառյալ՝ գենդերային հավասարությունը երաշխավորելու համար** (տե՛ս «Հետախուզական գործունեության նկատմամբ վերահսկողություն» խորագրով ԱՌՔ տեղեկագիրը): Ժողովրդավարական պետություններում քաղաքացու և մարդու իրավունքները սահմանափակող միջոցառումները պետք է հիմնված լինեն օրենքի վրա, զգուշորեն ստուգվեն նպատակայնության, անհրաժեշտության, համաչափության և մարդու իրավունքների վերաբերյալ ներպետական և միջազգային այլ պարտավորություններին համապատասխանության տեսանկյուններից, և անհատներին հնարավորություն տան բողոքներ ներկայացնել անկախ կառույցներին և ստանալ արդյունավետ իրավական պաշտպանության միջոց:

Ժողովրդավարական պետություններն իրենց հետախուզական ծառայություններին սովորաբար արգելում են հավաքել տեղեկություններ.

- Այն անձանց և գործողությունների մասին, որոնք սպառնալիք չեն հանդիսանում պետության և իր բնակչության համար,
- Օրինական քաղաքացու և սոցիալական գործունեության մասին,
- Որոշակի շահերի բավարարման նպատակով: Դրանից բացի, որոշ մասնագետներ (օրինակ՝ բժիշկներ, փաստաբաններ կամ լրագրողներ) կարող են պաշտպանված լինել՝ ըստ նրանց կողմից հասարակությանը մատուցվող ծառայությունների տեսակների:

▶ Հետախուզության աղբյուրները

Հետախուզությունը տեղեկատվություն է՝ ստացված տարբեր աղբյուրներից, որոնցից միայն մի քանիսն են հրապարակավ հասանելի: Այն ներառում է.

- Բաց աղբյուրից հետախուզություն (OSINT). բաց աղբյուրների օգտագործումը հետախուզության նպատակների համար,
- Գործակալական հետախուզություն (HUMINT). հավաքվում է մարդկանց՝ գործակալների, ինսպիրեյթների (յուրային անձինք) և այլ իրազեկիչների կողմից,
- Ռադիոտեխնիկական հետախուզություն (SIGINT). տվյալները ստացվում են, ի թիվս այլ աղբյուրների՝ կապի համակարգերը և տվյալների էլեկտրոնային հաղորդումները գաղտնալսելով,
- Տեսապատկերային հետախուզություն (IMINT). երկրագնդի մակերևույթից, երկնքից կամ տիեզերքից նկարահանող տեխնոլոգիաներ,
- Չափաձևական և բնութագրական հետախուզություն (MASINT). տեխնիկական և գիտական տվյալներ, որոնք ձեռք են բերվում միջուկային, օպտիկական, ռադիոհաճախականության, ձայնային, սեյսմիկ կամ այլ մոնիթորինգի արդյունքում:

Տեղեկատվությունը և տվյալները վերածվում են հետախուզության միայն այն ժամանակ, երբ դրանք ենթարկվել են մշակման և վերլուծության:

Հետախուզական ծառայությունները սովորաբար օժտված չեն իրավապահ լիազորություններով, օրինակ՝ ձեռքբերելու կամ կալանավորելու իրավասությամբ, բացառությամբ, երբ նրանք գործում են քրեական (օպերատիվ) հետախուզության որոշակի բնագավառում՝ իրավապահ մարմիններին աջակցելու նպատակով: Անվտանգության խնդիրներին առնչվող հետախուզությունը բազմաթիվ առումներով տարբերվում է իրավապահ գործունեության շրջանակում իրականացվող հետախուզությունից (Գծապատկեր 3):

Ոչ ժողովրդավար կառավարությունները հաճախ հետախուզական ծառայություններին վերապահում են լայնածավալ իրավապահ լիազորություններ՝ ուժեղացնելու նրանց կարողությունները քաղաքական բռնաճնշումների համար: Լիազորությունների չարաշահումից պաշտպանվելու նպատակով որոշ պետություններ էթիկական և իրավական հարթություններում տարբերակում են հետախուզական գործունեությունը և իրավապահ գործունեությունը, և այն դեպքում, երբ հետախուզական գործունեության արդյունքում առաջ է գալիս իրավապահ գործունեություն իրականացնելու անհրաժեշտություն, անմիջական գործողությունները ձեռնարկում են հետախուզական հանրային շրջանակներից դուրս գործող պաշտոնատար անձինք:

Ինչպե՞ս կարող են հետախուզական ծառայությունները հետևել անվտանգության ոլորտի լավ կառավարման պահանջներին


Հետախուզական ծառայության գործառնությունները, կառուցվածքը և առաքելությունը սահմանվում են օրենքով և ազգային սպառնալիքների ընկալմամբ՝ կախված իրավիճակի համատեքստից: Ավտորիտար համակարգի պայմաններում հետախուզական ծառայությունները պաշտպանում են կառավարությանը և կարող են իրականացնել քաղաքական բռնաճնշումներ և մարդու իրավունքների խախտումներ: Ժողովրդավարական երկրներում հետախուզական ծառայությունները պետական հատվածի մաս են և, հետևաբար, ծառայում են հանրային շահին: Հետախուզական ծառայությունների հատուկ լիազորությունները վերապահված չեն պետական այլ գերատեսչություններին և մասնավոր անձանց, և **պոտենցիալ կերպով ոտնահարում են ժողովրդավարական արժեքները**: Այսինքն, պետական այլ կառույցների համար պարտադիր սկզբունքները հաճախ ոչ նույն չափով են կիրառելի հետախուզական ծառայությունների նկատմամբ:

Լավ կառավարման սկզբունքները, սակայն, անհրաժեշտ են, որպեսզի հետախուզական գործունեությունը դուրս չգա իրավունքի գերակայության և մարդու իրավունքների, ներառյալ՝ գենդերային հավասարության նկատմամբ հարգանքի սահմաններից: Դա ապահովելու համար անհրաժեշտ է օրենքով հստակ սահմանել հետախուզական ծառայությունների լիազորությունները, դերը և պարտականությունները:

Երբ հետախուզական ծառայությունները հավատարիմ են լավ կառավարման սկզբունքներին, կրանք.

- Հաշվետու են ժողովրդավարական ճանապարհով ընտրված իշխանություններին, որոնք վերահսկում են հետախուզական գործընթացի բոլոր տարրերը,
- Թափանցիկ են ժողովրդավարական վերահսկողության համակարգում, որը պաշտպանում է գաղտնի տեղեկատվությունը՝ միաժամանակ բացահայտումներ կատարելով ծառայելով հանրային շահին,
- Հստակ ձևակերպված իրավական դաշտի շրջանակներում ապահովում են հարգանքը մարդու իրավունքների և իրավունքի գերակայության նկատմամբ,
- Ներառական են, և իրենց գործառնությունների և վարչարարության մեջ իրականացնում են ոչ խտրական և գենդերային հիմնախնդիրները հաշվի առնող քաղաքականություններ և ընթացակարգեր,
- Վրդյունավետորեն կատարում են իրենց լիազորությունները՝ հանուն պետության և մարդու անվտանգության,
- Վրդյունավետորեն իրագործում են հանրային քաղաքականության նպատակները՝ միևնույն ժամանակ ապահովելով հանրային ռեսուրսների լավագույն հնարավոր օգտագործումը:

Գծապատկեր 3 Անվտանգության խնդիրներին առնչվող հետախուզության համեմատությունը իրավապահ գործունեության շրջանակում իրականացվող հետախուզության հետ



Լավ կառավարման սկզբունքների անտեսումը կարող է հակառակ հետևանքների հանգեցնել, օրինակ.

- Անբավարար վերահսկողությունը սասանում է հետախուզական ծառայությունների վստահելիությունը և լեգիտիմությունը,
- Չափից ավելի գաղտնիությունը չարաշահման հնարավորություններ է ստեղծում՝ վտանգելով պետության և մարդու անվտանգությունը,
- Անօրինական գործունեությունը վտանգում է պետության և մարդու անվտանգությունը, որոնց պաշտպանելու պարտավորությունն են կրում հետախուզական ծառայությունները,
- Արտակարգ հետախուզական ծառայությունները կարող են հակված լինել բռնաճնշելու բնակչության որոշ խմբերի, կամ կարող են չունենալ տեղեկություններ օտարված որոշ խմբերից և չկարողանալ գնահատել հակադրվող տեսակետները,
- Զաղաքականացված հետախուզությունն արդյունավետ չէ, քանի որ անուշադրության է մատնում անվտանգության առկա և հետագա սպառնալիքները՝ ի նպաստ կառավարության անմիջական քաղաքական խնդիրների,
- Ոչ արդյունավետ հետախուզական ծառայությունները միջոցներ են վատնում կամ թերանում են միջոցների օգտագործման վերաբերյալ հաշվետու լինելու մեջ:

Լավ կառավարման համակարգի բացակայությունը ծայրահեղ դեպքերում կարող է հանգեցնել քաղաքականացված հետախուզական ծառայություններ, որոնք սպասարկում են կոնկրետ քաղաքական շահեր և կարող են օգտագործվել քաղաքական բռնաճնշումների համար:

Ինչպե՞ս են անվտանգության ոլորտի բարեփոխումները նպաստում հետախուզական ծառայություններին

ԱՌԲ-ի շրջանակներում հետախուզության բարեփոխումների նպատակն է նվազագույնի հասցնել թվարկված ռիսկերը՝ հետախուզության նկատմամբ լավ կառավարման սկզբունքները կիրառելով ժողովրդավարական վերահսկողության միջոցով, որը երաշխավորում է հարգանքն առ իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքները:

ԱՌԲ-ն բխում է հետախուզության ծառայությունների շահերից, քանի որ.

- Կենսունակ ժողովրդավարական վերահսկողությունը հետախուզական ծառայություններին պաշտպանում է քաղաքական իշխանությունների կողմից լիազորությունների չարաշահումից և բարելավում հետախուզական ծառայությունների վստահելիությունը և լեգիտիմությունը,
- Հետախուզության մասնագետներն շահում են արդար վերաբերմունքից և աշխատանքային պայմաններից,

▶ Անվտանգության ոլորտի լավ կառավարումը (ԱՌԿ) և անվտանգության ոլորտի բարեփոխումները (ԱՌԲ)

ԱՌ լավ կառավարման սկզբունքներն են հաշվետվողականությունը, թափանցիկությունը, իրավունքի գերակայությունը, մասնակցությունը, արձագանքումը, արդյունավետությունը և արդյունքայնությունը: ԱՌ լավ կառավարումը, ըստ այդմ, այն նորմատիվային ստանդարտն է, որի համաձայն պետական անվտանգության ոլորտը պետք է գործի ժողովրդավարական հասարակարգում: Անվտանգության ոլորտի բարեփոխումների նպատակն է ԱՌ լավ կառավարման սկզբունքների կիրառումը անվտանգության ապահովման գործընթացի նկատմամբ: ԱՌԲ-ը պետության և մարդու անվտանգության բարելավման քաղաքական և տեխնիկական գործընթաց է, որի շրջանակում անվտանգության ապահովումը, կառավարումը և վերահսկողությունն ավելի արդյունավետ և հաշվետու են դառնում ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ենթատեքստում: ԱՌԲ-ը կարող է ուղղված լինել պետական անվտանգության ապահովման կոնկրետ մեկ հատվածի կամ ամբողջ համակարգի գործունեության վրա, քանի դեռ նպատակը մշտապես արդյունավետության և հաշվետվողականության բարելավումն է:

Երբ աշխատում են իրենց գործելակերպի և ռեսուրսների օգտագործման համար հաշվետու կառուցվածքի կազմում,

- Կանանց և փոքրամասնությունների ներակայացուցիչների ներգրավմամբ հավասարակշռված աշխատուժ ունեցող ներառական հետախուզական ծառայություններն ապահովում են գաղափարների ավելի լայն բազմազանություն և վիճարկում սոցիալական նախապաշարմունքները, ինչը հանգեցնում է հետախուզական տեղեկատվության ավելի լավ վերլուծության,
- Ներառական հետախուզական ծառայությունները կարող են արձագանքել բնակչության տարբեր խմբերի՝ հատկապես փոքրամասնությունների տարատեսակ կարիքներին, ինչպես նաև՝ տարբեր աղբյուրների միջոցով բարելավել իրենց կողմից իրականացվող գնահատականների որակը:

Ինչպե՞ս է կարելի գաղտնիությունը դարձնել համադրելի լավ կառավարման հետ

Հետախուզական ծառայությունները ապավինում են գաղտնիությանը, սակայն **հետախուզական ծառայությունների ոչ բոլոր գործողություններն են հավասարաչափ գաղտնի**: Այսինքն, տեղեկատվության հասանելիության մասին օրենքները կարող են տարածվել նրանց նկատմամբ: Հետախուզության նկատմամբ վերահսկողության շրջանակներում վերահսկողություն իրականացնող մարմինները, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող և բողոքարկման մարմինները՝ ներառյալ դատարանները և դատական ատյանները, սովորաբար ունեն բոլոր տեղեկությունները ստանալու իրավունք՝ անկախ գաղտնիության աստիճանից: Այդուհանդերձ, կախված ծառայության լիազորություններից՝ հետախուզական գործունեության որոշ տարրեր պահանջում են գաղտնիություն՝ անգամ արտաքին վերահսկողության մարմիններից՝ անհատներին, ծառայություններին և պետությանը վտանգներից պաշտպանելու նպատակով: Այդպիսի տարրերը կարող են ներառել.

- Տեղեկատվություն՝ աղբյուրների, ընթացքի մեջ գտնվող գործողությունների, մեթոդների և ընթացակարգերի վերաբերյալ,
- Օպերատիվ աշխատակիցների ինքնությունը և նրանց տնօրինած տեղեկությունները,
- Օտարերկրյա ծառայությունների կողմից գաղտնի սկզբունքով տրամադրված հետախուզական տվյալների ծագումը և մանրամասները:

Գործողությունները գաղտնի կարող են լինել տարբեր առումներով: **Ճածուկ գործողությունները** կատարվում են բացարձակ գաղտնիության պայմաններում. լրտեսության դեպքում, օրինակ, ինչպես տեղեկատվության ձեռքբերումը այնպես էլ գործակալները մտում են անհայտ: **Քողարկված գործողության** շրջանակում գաղտնի է գործակալի ինքնությունը, բայց ոչ գործողությունը: Սա **ճշմարտանման հերքման (plausible deniability)** հնարավորություն է ընձեռում, այսինքն՝ կառավարությունը կարող է հիմնավոր փաստարկներ ներկայացնելով հերքել հետագայում հրապարակայնորեն հայտնի դարձած գործողության մասին իր տեղեկացվածությունը կամ դրա համար իր պատասխանատվությունը: Ճշմարտանման հերքումը գործողության միջոց է, որը դուրս է գալիս դիվանագիտության սահմաններից, սակայն ռազմական ուժ չի պահանջում:

Թեպետ պետություններն հաջողությամբ և ակտիվորեն օգտագործում են գաղտնի գործունեության տարբեր տեսակներ, **ժողովրդավարական հասարակությունում չափից ավելի գաղտնիությունը նվազեցնում է հետախուզական ծառայությունների լեգիտիմությունը**: Բացահայտ գործելակերպը՝ թափանցիկության և հաշվետվողականության հետ մեկտեղ, հիմնարար նշանակություն ունի ժողովրդավարական կառավարման և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Սա պահանջում է, որպեսզի **գաղտնիությունը մնա բացառություն, որն արդարացվում է տեղեկատվության հանրային դառնալու դեպքում ծագող որոշակի և զգալի վնասի առաջացման վտանգով**:

Ընդհանուր առմամբ՝ **տեղեկատվությունը գաղտնի դարձնելու համար անհրաժեշտ են հստակ իրավական հիմքեր**: Տեղեկատվության դասակարգման կանոնները, տեղեկատվության ազատությունը, ինչպես նաև վերահսկողություն իրականացնող մարմինների համար տեղեկատվության հասանելիությունը պաշտպանում են չափից ավելի գաղտնիությունից: Բացահայտ գործելակերպը խրախուսում է ավելի դիմափկ վերահսկողություն՝ միտված անօրինական գործողությունների և չարաշահումների բացահայտմանը, միաժամանակ կանխելով հետախուզական ծառայություններում անպատժելիության մշակույթի ձևավորումը: «Հետախուզական գործունեության նկատմամբ վերահսկողություն» խորագրով ԱՌՔ տեղեկագիրը որոշակի տեղեկություններ է պարունակում ժողովրդավարական վերահսկողության պայմաններում գաղտնիության կառավարման վերաբերյալ:

Ի՞նչ է հետախուզության ոլորտում միջազգային համագործակցությունը

Հետախուզության ոլորտում միջազգային համագործակցությունը ներառում է տարբեր պետությունների հետախուզական մարմինների միջև իրականացվող համագործակցությունը կամ փոխգործակցությունն այնպիսի նպատակների համար, ինչպիսիք են պաշտպանությունը, ազգային անվտանգությունը և ծանր կամ կազմակերպված հանցավորության կանխարգելումն ու հայտնաբերումը:

Հետախուզության ոլորտում համագործակցությունն օգտակար է ինչպես հետախուզական ծառայությունների սեփական գործունեության, այնպես էլ երկրի ազգային շահերի համար: Տեղեկատվության փոխանակումը կարող է կարևոր լինել ահաբեկչության կանխարգելման համար: Միջազգային համագործակցությունը հետախուզության բնագավառում երբեմն ծառայում է նաև ավելի բազմակողմակի նպատակների, ինչպիսին կարող է լինել ռազմական հանցագործների որոնումը, ՉՌՉ չտարածումը կամ կազմակերպված անոր) ազգային հանցավորության դեմ պայքարը:

Հետախուզական ծառայություններն են որոշում ինչպես, երբ և օտարերկրյա որ հետախուզական ծառայությունների հետ համագործակցել՝ ելնելով իրենց իրավական շրջանակից: Նման համագործակցության ձգտելու պատճառներից են.

- **Այնպիսի տեղեկությունների ստացումը**, որոնք այլ պարագայում դժվար կլիներ հավաքել: Այս եղանակով աշխատանքի բաժանումը և պարտականությունների բաշխումը կարող է բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը,
- **Սպառնալիքների և հիմնախնդիրների վերաբերյալ այլընտրանքային տեսակետներ ստանալը**, ինչը բարելավում է որոշումների կայացումը՝ վիճարկելով հաստատված ենթադրությունները,

– **Հետախուզական տեղեկատվության հավաքման բարձր ռիսկայնություն ունեցող գործողությունների նվազեցումը կամ դրանցից խուսափումը**։ օտարերկրյա հետախուզական ծառայությունները կարող են ավելի քիչ ռիսկի ենթարկվել հակամարտող պետություններում, կամ ավելի մեծ հասանելիություն ունենալ՝ տեղի բնակչության հետ որոշ ընդհանրություններ ունենալու շնորհիվ։

Ավելին, հետախուզության ոլորտում միջազգային համագործակցությունը կարող է օգտակար լինել բազմակողմ իրավիճակներում՝ ընդհանուր գնահատականների և ռազմավարական հայեցակարգերի փոխանակմամբ, հանրության տեսադաշտից դուրս բանակցությունների վարմամբ, խաղաղ բնույթի պաշտպանության ռազմավարություններ հաստատելով կամ օժանդակություն ցուցաբերելով խաղաղապահ առաքելություններին։

Այդուհանդերձ, հետախուզության ոլորտում միջազգային համագործակցությունը կարող է ունենալ որոշակի ռիսկեր։ Դրանք ներառում են փոխանակված տեղեկությունների նախատեսված օգտագործմանն առչվող անորոշությունը, ստացված տեղեկությունների իսկությունը կամ դրանց ստացման եղանակները ստուգելու դժվարությունները, ինչպես նաև հեղինակության ռիսկերը՝ օտարերկրյա այնպիսի ծառայությունների հետ համագործակցելիս, որոնց կողմից տեղեկատվության հավաքման համար կիրառվող որոշ մեթոդներ կարող են տեղեկությունները ստացող պետությունում կամ միջազգային իրավունքի նորմերի համաձայն համարվել անօրինական։

Լրացուցիչ աղբյուրներ

Ժողովրդավարական պետություններում արդյունավետ հետախուզության և վերահսկողության մարտահրավերների մասին.

– Baldino, Daniel (Ed.) (2010)

Democratic Oversight of Intelligence Services
Sydney: The Federation Press.

– Born, Hans, Loch K. Johnson and Ian Leigh (Eds.) (2005).

Who's Watching the Spies?: Establishing Intelligence Service Accountability Dulles, VA: Potomac Books.

– Herman, Michael (2013).

Intelligence Services in the Information Age: Theory and Practice
London; Portland, OR: Frank Cass.

Առանձին պետություններում հետախուզական ծառայությունների բարեփոխումների մասին.

– Bruneau, Thomas C. and Scott D. Tollefson (Eds.) (2006)

Who Guards the Guardians and How: Democratic Civil-Military Relations
Austin: University of Texas Press.

– O'Brien, Kevin A. (2011)

The South African Intelligence Services: From Apartheid to Democracy, 1948–2005
New York: Routledge.

– Timmermann, Heiner (Ed.) (2013)

The Future a Memory: The Cold War and Intelligence Services – Aspects
Zurich: LIT Verlag.

– Williams, Kieran and Dennis Deletant (2001)

Security Intelligence Services in New Democracies: The Czech Republic, Slovakia and Romania
New York: Palgrave.

Հետախուզության ոլորտում միջազգային համագործակցության մասին.

– Born, Hans, Ian Leigh and Aidan Wills (2015)

Making International Intelligence Cooperation Accountable
Geneva: DCAF.

– Lefebvre, Stéphane (2003)

The difficulties and dilemmas of international intelligence cooperation

International Journal of Intelligence and CounterIntelligence, 16(4), 527–542.

– OSCE-ODIHR (2007)

Countering Terrorism, Protecting Human Rights: A Manual
Warsaw: ODIHR.

DCAF-ի լրացուցիչ հրապարակումներ ԱՌԲ-ի վերաբերյալ

– DCAF-ը հրապարակում է տարատեսակ գործիքներ, ձեռնարկներ և ուղեցույցեր ԱՌԲ-ի և ԱՌԼԿ-ի վերաբերյալ, որոնք կարելի է անվճար ներբեռնել www.dcaf.ch կայքէջից:

Նյութերից շատերը հասանելի են անգլերենից բացի նաև այլ լեզուներով:

– The DCAF-ISSAT Community of Practice կայքէջը ԱՌԲ-ի մասնագետների համար առաջարկում է առցանց ուսուցման համար հասանելի բազմաթիվ նյութեր: Տե՛ս <http://issat.dcaf.ch>

DCAF Անվտանգության ոլորտի կառավարման ժնևյան կենտրոնը հավատարիմ է պետությունների և ժողովուրդների անվտանգության բարելավմանը ժողովրդավարական կառավարման, օրենքի գերակայության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և գենդերային հավասարության շրջանակներում: 2000 թվականին իր հիմնադրումից ի վեր՝ DCAF-ը նպաստել է խաղաղության և զարգացման կայունությանը՝ օժանդակելով գործընկեր պետություններին և նրանց աջակցող միջազգային կազմակերպություններին անվտանգության ոլորտի կառավարումը ներառական և մասնակցային բարեփոխումների միջոցով բարելավելու նպատակով: DCAF-ը ստեղծում է նորարարական կրթական կյոթեր, խթանում է նորմերը և դրական փորձը, տրամադրում է իրավական և քաղաքականության վերաբերյալ խորհրդատվություն և աջակցում է անվտանգության ոլորտում ներգրավված պետական և ոչ պետական շահագրգիռ կողմերի կարողությունների բարձրացմանը:

DCAF-ը երախտապարտ է հետևյալ անձանց
Ռոնջա Յարդերին՝ հետազոտությունը իրականացնելու, գրելու և խմբագրելու աշխատանքներին մասնակցելու համար, Ջենի Ռաուզին՝ անգլերեն տարբերակի խմբագրման համար, Ֆլորենս Լեզուրին՝ ֆրանսերեն թարգմանության համար, Ժերալդին Շանտեգրեյին՝ ֆրանսերեն տարբերակը խմբագրելու համար, և Պետրա Գուրթներին՝ պատրաստման և դիզայնի համար:

Շարքի խմբագիր՝
Ֆերի Չափուի

Սույն հրապարակումից մեջբերումների համար նշել:
Geneva Centre for Security Sector Governance,
“Security Sector Reform”, SSR Backgrounder Series
(Geneva:DCAF, 2015).

© DCAF ԱՌԲ տեղեկագրերն անվճար կարելի է ներբեռնել www.dcaf.ch կայքէջից: Օգտագործողները կարող են կրկնօրինակել և տարածել այս կյոթը՝ DCAF-ը հիշատակելու պայմանով:
Նախատեսված չէ առևտրային օգտագործման համար:



Անվտանգության ոլորտի կառավարման ժնկի կենտրոն
DCAF - Geneva Centre for Security Sector Governance
Maison de la Paix
Chemin Eugène-Rigot 2E
CH-1202 Geneva, Switzerland
Tel: +41 22 730 94 00
info@dcaf.ch
www.dcaf.ch
Twitter @DCAF_Geneva

ԱՌԲ տեղեկագրերը կարելի է ընթերցել համացանցում
կամ անվճար ներբեռնել SSR Backgrounders ծրագրային
հավելվածը բջջային հեռախոսների և պլանշետների համար.
www.ssrbackgrounders.org